ՈՐԲԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

Մի լար, քոյր իմ... դառն արցունքով.
Եղբօրդ սիրտը մի այրիլ.
Մեր խղճուկ մօր դու լաց-սուգով
Նորից կեանք չես պարգևիլ։

Անգութ մահը նորան անդարձ
Խլեց մեզնից յաւիտեան,
Եւ մեզ անտէր, մօրից զրկուած,
Մատնեց կեանքի դառնութեան։
Բայց դու մի լար... քոյր իմ անգին,
Ցիշիր մեր մօր սուրբ խրատ,
Որ նա մահուան տխուր ժամին
Մեզ կտակեց իբր տանդ։
«Սիրէք միմեանց»—նա մեզ ասաց—
«Անվերջ սիրով, իմ որդիք,
«Սիրէք անկեղծ ու անձնուրաց,
«Որ միշտ լինէք երջանիկ»։

Մի լար, քոյր իմ... այսուհետև
Թող այդ սէրը կեանքի մէջ
Լինի մեզ մայր, թիկունք ու թև,
Նա մեր ցաւին կտալ վերջ...

Մահիւ. 11 օգոստոսի 1888 թ.